

ՀԱՅՐԵՆԻՔ-ՄՓՅՈՒՌՔ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՀԵՏ

Աշնանային օր՝ լի պոեզիայով ու քնարականությամբ: Այո՛, Ռոստոմի մարզում հյուրընկալվել էր ժամանակակից հայ բանաստեղծ Արմեն Երիմյանը: Եվ երիմյանական պոեզիայի մի խումբ սիրահարների նախաձեռնությամբ Դոնի Նախիջևանի հայկական համայնքի հյուրասրահում տեղի ունեցավ Արմեն Երիմյանի հանդիպումը տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Ողջույնի խոսքում «Դոնի Նախիջևան» ամսաթերթի գլխավոր խմբագիր Վարդան Աբրահամյանը նշեց, որ Արմեն Երիմյանը ժամանակակից հայ գրականության ամենաակտիվ հույզերից մեկն է, նրա բանաստեղծություններում մշտապես առկա է նորի զգացողությունը, փոթորկուն հույզերի ու զգացմունքների մեջ համամարդկային գաղափարներն են:

Երեկոյի ողջ ընթացքում ուսուցչուհի Աննա Բեգլարյանը մեծ ոգևորությամբ ընթերցում էր Երիմյանի բանաստեղծությունները և յուրաքանչյուրից հետո իր գեղեցիկ կատարումներով պարուրում ներկաներին:

Իրենց արտի ջերմ խոսքերն ասացին սփյուռքի նրա երկրպագուները: Հայկական ջերմ հարկի տակ Արմեն Երիմյանին հյուրընկալած ամուսիններ Ավետիս Տեր-Հովհաննիսյանի և Գայանե Ամիրխանյանի խոսքը շատ գեղեցիկ էր. «Երիմյանի աշխարհի և տիեզերքի հետ հարաբերվելու հենակետը պոեզիան է, ուր նա անկեղծ է ու ազատ: Նա ձևավորված հստակ սկզբունքներով պոետ

է: Նրա տունն աշխարհն է և աշխարհի ցավը միախառնվելով անհատականին զգացմունքային տողեր է արարում ցավը մեղմելու, տխրությունը ապրելու ձգտումով փարատելու միտումով»: Իսկ նրանց որդին ութամյա Նարեկը, ով նույնպես Արմենի մեծ երկրպագուն է, ներկաներին հիացրեց իր երկար ու գեղեցիկ ասմունքով:

Սփյուռքահայ երիտասարդ բանաստեղծուհի Արփինե Օհանյանը նշեց. «Արմենի ստեղծագործությունները նման են տաք շնչառության, որի կարիքն ունեն քամու սլացքում անհետացող ծաղիկների արմատները, սառույցի տակ անշարժ տերևները, հոգիները տուն չունեցող, բայց լերը»:



օտարության տանող...» Ջերմ ու մտերմիկ մթնոլորտում հանդիպման հյուրերն ավելի լավ ճանաչեցին Արմեն Երիմյան բանաստեղծին և ունկնդրեցին նրա ստեղծագործությունները: Կիսվելով հանդիպումից ստացած տպավորություններով՝ բանաստեղծը նշեց, որ այս հանդիպումն իր տեսակով բացառիկ էր, վերադառնում է հայրենիք բարձր տրամադրությամբ և դրական լիցքերով լիցքավորված:

Արմինե ՀՈՎՍԵՓՅԱՆ

«Դոնի Նախիջևան» ամսաթերթի գլխավոր խմբագիր Վարդան Աբրահամյանը պարզապարզում է Արմեն Երիմյանին:



Մինչ մեծերը հայրենիքի կարոտն էին առնում Երիմյանից, փոքրիկ Նարեկն ու Արտաշեսը հայրենիքն էին պատկերում կողքի սենյակում...

ՀՈՐՄ ԱՊՏԱԿԸ

Հորս ապտակը ցավոտ էր մի քիչ, Թեև ներել էս, բայց չէմ մոռանում... Ինձ ճիշտ հասկացեք, հիշաչար չեմ, չե՛, Անգամ պատմելիս ես չեմ չարանում, Պարզապես փոքր ինչ կոշտացած ափի Ու հինգ մատների դաղն էմ դեռ հիշում... Նաև հիշում եմ ինձ տրված անգուսպ Հայիտյանքները երեք հարկանի, Ու բղավոցը թե մա բղ չես դառնա, Մտոր ու սրիկա, անառակ որդի... Գոռո մ էր, ծխում, աչքերը լցնում Ու երկա ր ժամեր ոչինչ չէր խոսում, Հետո վեր կենում, հագնվում, գնում, Կամ էլ իմ մորից կոնյակ էր ուզում. Մի երկու բաժակ լցնում ու խմում, Բազմոցին թիկնում, խորհում ու քնում... Արդեն անցել են երկար տարիներ. Հիմա գրեթե մենք էլ չենք վիճում, Բայց ինձ մինչ օրս մի հարց է տանջում.

Տեսնես նա ի՞նչ էր այդժամ մտածում... Գուցե գոթում էր ծնվելուս համար, Անարժան ծառանգ լինելու համար, Գուցե ամաչում կամ էլ բարկանում Երիմյանների մեծ տոհմաձառում Փոքր անունս գրվելու համար...

Եվ ո՞վ իմանա՛ Գուցե և խղճում ու տառապում էր Հարվածից հետո քթիցս հոսող Այ արյան համար ի ր արյան համար... Ես դեռ չգիտեմ... բայց մի բան գիտեմ, Որ դեռ պատանի հեռացա տանից, Լույսը թողնելով խավարն ընտրեցի, Լայն ճամփան թողած նեղով քայլեցի... Ու թեև ոտքս այն էլ անկոշիկ, Արդեն աշխարհի փուշն էր տրորում, Կարոտից պաղած թախճոտ աչքերս Իմ հոր օջախից ես չէի կտրում... Անտո ւն մնացի, անհո ւյս մնացի, Սոված ու ծարավ օրեր ապրեցի, Ընկա ու ելա, ինձ վեր հանեցի, Շապ տառապեցի, բայց չձնկեցի... Լսո մ էք, մարդի կ, հորս ապտակը, Հորս ապտակը ինձ մարդ դարձրեց, Հորս ապտակը ինձ դասեր տվեց Ու կյանքի հմուտ ճամփորդ դարձրեց... Հորս հայիտյանքն անե ծք չէր բնավ. Հորս հայիտյանքն օրհնություն ւն եղավ...

Ո՞վ է ասում՝ Հայաստանում Հացին կարոտ մարդ չի մեռնում, Հայաստանում հայ քաջերին Հաց տանո դն է անգամ մեռնում: Ու մեռնում է Ոչ թե թուրքի փամփուշտներից, Այլ հոռացած Իշխանության օրենքներից: Ո՞վ է ասում, Թե հերոսը նա՛ է միայն, Ով մեռնում է մարտի դաշտում: Չէ՛ որ նաև հերոս է նա Ով հերոսին Հաց է տանում կյանքի գնով, Ով քաջերին սնում հացով, Բայց մեռնում է սով ապրելով:

Հայաստանը Սով է ապրում լոկ մարդկության, Բայց ապրում է Մեծ հույսերով նոր արթնության: Ու չեմ ուզում այսօր սգալ, Թե՛ Արթուրը մեռավ անձայն, Մարգարյանը ապտակ տվեց, Որ արթնանա ողջ Հայաստան:

Հաց բերողը սոված մեռավ, Որ հայ ազգը Գինն իմանա «էժան» հացի, Որ հայ ազգը գնահատի, Անգին գինը հերոսների Պավիկի - Արամ - Արայիկի, Մեֆիլյանի ու շատ այլոց Արյուն թափած անպարտների:

Ոմանց անգամ թո՛ւրքը փորձեց Հալածել ու կյանքից գրկել Մեզ Շուշիի խավար բանտում, Բայց չմեռա ն, բայց չմեռա ն Ոչ տանջանքից ու ցավերից, Ոչ էլ սովից ու ծարավից...

Եվ ինչքա՛ն է հայը հոգնել Այս անօրեն օրենքներից, Որ քաջերին հաց տանողը Լո տ մեռնում է հացադուլից...

Մե՛ծն Սևակ, քեզ խնդրում եմ, Որ հենց հիմա դու վեր կենաս Ու քո գրչի հզոր ուժով, Ճշմարտության բարձր ձայնով Հայաստանը հիմքից շարժես, Մեր աչքերը նորից բացես Ու բղավես, ու մեզ ասես, Եթե մեռնել, ապա ինչպե՛ս...

Եթե մեռնել, ապա այնպես, Որ կյա նք փրկել, ոչ թե սպանել, Եթե մեռնել, ապա այնպես, Որ մահանալ, բայց... չմարե՛լ:

Ե՛վ գրում եմ, և՛ բարկանում Ու ինքս ինձ խիստ հայիտյուն, Որ Արթուրի խիզախ մահը Մեռածների հետ եմ դասում:

Պետք չէ՛ դասել, Պետք է դասե՛ր, դասե՛ր քաղել Հաց բերողի քաջությունից: Պետք չէ՛ լացել, Պետք է նորի ց վերածնվել ԿԱՆՄԻՐ հացի գորությունից...

Միայն հավատքով է կարելի ամեն վերջից սկիզբ ստեղծել:

Քանի ցավում ես անցյալիդ համար, ուրեմն անցյալդ դեռ քո ներկան է:

Պետք չէ անկեղծանալ այն մարդկանց հետ, որոնք մեզ լսում են պարզապես լսելու համար:

Վստահությունն այն զգացողությունն է, որում համոզվում ենք միայն վստահելուց հետո:

Արմեն ԵՐԻՄՅԱՆ